163
L II. 2

Ի ՍԱՑԵՆԱԳՐԱՆԷ
Մէլքոնի Գասպարեան
ՓԱՆԵՆԱՆՑ·

БИБЛІОТЕКИ
Мелькона Каспаровича
ПАНІЕВА.

№ 1283

№ 1· ՅՈՒՆՎԱՐԻ 10 (22) 1877 ՅՈՒՆՎԱՐԻ 10 (22) № 1·

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում,

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

կը հրատարակվի այս 1877 թւից շաբաթը երկու անգամ: Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՏՕՆԵՐԻ պատճառով այս շաբաթը ստիպված ենք «Մշակի» միայն մի համար հրատարակել, մանաւանդ որ այս օրերս սաստիկ խառնված էինք տեղափոխվելով առաջվայ տպարանից մի ուրիշ տպարան, այն է պ. Յ. Մարտիրոսեանի տպարանը: Հետևեալ համարը կը հրատարակվի յունվարի 17—ին, երկուշաբթի օրը, և այնուհետև համարները կանոնաւոր կերպով դուրս կը գան ամեն հինգշաբթի և երկուշաբթի օրերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակ» լրագիրը 1877 թւին։—Ներքին տեսութիւն։ Կովկասի Թուրք ազգաբնակութիւնը։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան հարցի հետևանքները։ Հրեաների դրութիւնը Եւրոպայում։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։ — Բանասիրական Վարինկի վէչերը։

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ 1877 ԹՒԻՆ

—

Հինգ տարի շարունակ գոյութիւն ունենալուց յետոյ որպէս շաբաթաթերթ, վեցերորդ տարին «Մշակը» պէտք է հրատարակվի շաբաթը երկու անգամ:

Երբ որ 1872 թւին «Մշակը» սկսեց հրատարակվել, ամենքը կասկածաւոր աչքով էին նայում մեր լրագրի վրա: Ով ոք չէր կամենում հաւատալ թէ մի հայոց լրագիր կարող է աջողվել.... Առանց նիւթական օգնութեան, առանց բարոյական քաջալերութեան, բարեկամների մի փոքրիկ խմբի համակրութեամբ միայն մենք առաջ տարանք մեր գործը հինգ տարի շարունակ, շրջապատված լինելով ամեն կողմից անհաշտ, կատաղի թշնամիներով:

Չընայելով այդ բոլոր բարոյական արգելքներին, մենք վաղուց արդէն ձեռք տուած կը լինէինք մեր լրագրի շաբաթը երկու անգամ հրատարակութեանը, պահելով նոյն բաժանորդագինը, եթէ մեր նիւթական դրութիւնը աւելի աջող լինէր, եթէ օրինակ մեր բաժանորդների թիւը հասած լինէր հազարի: Բայց որովհետև մեր բաժանորդների թիւը երբէք չէր էլ հասնում եօթ հարիւրի, մեզ մնում էր միայն մեր դիտաւորութիւնը իրագործելու համար, աւելացնել բաժանորդագինը:

Եւ ահա մենք այդ արեցինք այս տարի:

Որքան մենք կարողացանք գրաւել մեր ընթերցողների համակրութիւնը, որքան մենք չը շեղվեցանք մեր նախագծված ուղղութենից,— այդ մասին մենք թողնում ենք դատել հասարակութեանը....

Մենք մեզ վրա խօսելու դիտաւորութիւն չունենք, մենք միայն մի բան կասենք՝ ինչպէս որ «Մըշակին» վիճակված էր քիչ թէ շատ բարձրացնել Կովկասում առաջվայ գործող անձերի շնորհով հայ լրագրութեան կոտրված և անարգված անունը,—այնպէս էլ այժմ կրկին «Մշակին» վիճակված է առաջին անգամ իրագործել Ռուսաստանի հայերի մէջ մի հայ թերթի շաբաթը երկու անգամ երևալը:

Դա երբէք եղած չէ մեզ մօտ և դորա համար հարկաւոր է մեծ վստահութիւն ունենալ, մեծ ռիսկ անել....

Յոյս ունենք որ մենք կը կարողանանք իրագործել մեր դիտաւորութիւնը, բայց նրան կատարելապէս աջողեցնելու համար մեզ հարկաւոր է հայ հասարակութեան համակրութիւնը և օգնութիւնը:

Առանց հասարակութեան օգնութեան՝ մենք ոչինչ չենք կարող գործել:

Բայց եթէ հայոց հասարակութիւնը մեզ օգնութեան ձեռքը կը մեկնէ, մենք վստահ ենք որ դարձեալ յաղթող դուրս կը գանք բոլոր արգելքներից և թշնամական ոյժերից, ինչպէս որ մինչև այժմ էլ, հինգ տարվայ ընթացքում, հասարակութեան մի մասի օգնութեան միջոցով յաղթող ենք դուրս եկել բոլոր արգելքներից, կատաղի թշնամական ոյժերից, խաւար ադիտութենից, ընթամիտ ինքնահաւանութենից և սև ու մութ ինտրիգաներից....

Ամեն մարդ կրում է իր խաչը, բայց այն մարդկանց, որոնք բացի իրանց մասնաւոր խաչից կրումեն և հասարակական խաչը, այդ ծանր բեռը այն ժամանակ միայն թեթև կերևայ, երբ նոքա կը տեսնեն համակրութիւն հասարակութեան կողմից, կը ստանան իրանց տոկուն աշխատանքի, իրանց գործունէութեան մէջ օգնութիւն այն հասարակական տարրերի կողմից, որոնց նուիրել են իրանց նիւթական, մտաւոր և բարոյական ամբողջ ոյժերի ծառայելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐՔ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Ամբողջ Կովկասի բնակիչների մէջ ամենաանշարժ և լուսաւորութենից յետ մնացած մասը Թուրք ազգաբնակութիւնն է:

Այդ անշարժութեան գլխաւոր պատճառ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԻՆԿԻ ՎԷՋԵՐԸ

—

Ձիւմ գիւղի վուր ամսի մէկն էր, չաբաթ օրը լուսանում էր։

Էս էն օրն էր, վուր Սանթուրինց Մակակօն մէ մինձ փառքի պիտի արժանացիլ էր։

Ո՞վ էր Սանթուրինց Մակակօն։ Սանթուրինց Մակակօն, պարոն դուն իմն խօ, մէ խիղճ մարթու կնիկ էր, ջահիլ ու մէ էրեխի դէդա։ Խիղճ էլ վուր ասում իմ, չը գիդենաք, աղա ջան, թէ մարթու կնիկ դանէ դուսը աղկատութին էին անում։ Չէ Աստուած մի արացէ ու էտ օրին չը հասցնէ նրանցը. ամա մէ մարթ հացիր հացրաբաչի դաղած փուղ վուր չունենայ ու լէնքթէմուրի թիքը ննգած բարաթ բարաթ չըլի անուչ անում, էլի վուր խիղճ է յիշվում։ Ինչ անիս էնէնց է աշխարքը։

Արա ինչ սիւ քար ունէր Մակակօի մարթը, վուր լէնքթէմուրի էին ժամ էկի. լուսը լուսանում էր թէ չէ, գնում էր իր փէշակին ու սաղ օրուան չարչարանքով մէ էրկու արասի ձլիւ էր տուն բերում ու կնիկը վունց պօվար ունէր տանն ու վունց լաքիա. նրա հոգի դնողը մէ պառաւ Սինդուխան էր, վուր ճաշն էլ նա էր չինում ու լուացքն էլ նա էր անում. խիղճ Մակակօի չատ կար անէլէն խօ աչկի լուսը Թուխ էր ու մատի ծէրիրը բշբշ տիլ։ Էսէնց օտկում էին մարթը կնգան ու կնիկը մարթուն, ուրիշ մայիա նրանք չունէին ու մասկան, օր դաղում էին, օր ուտում։ Էս էր նրանց խղճութինը. վայլ նաչարի ապրում էին ու օչվուն ձէռը չէին դէմ տալի։ Միր մէջը կի ասինք, վուր չատ ձեռը դէմ տուող մարթ կայ, վուր Մակակօի մարթու վրա չէն է։

Մէ խօսքով Մակակօի մարթն, ասում իմ, մէ խիղճ փէշաքար էր։ Ղուրթ է նրա հերը վուր մեռաւ, ասում էն, մէ իրէք չուրս հարուր թուման փուղ էթող. ամա վուրղի էր էն փուղը, ոչով չը կանաց գթիլ էր. մէ քանի չար լիզու կի աւելցնում էին, թէ էն փուղը նրա բիձէն է տակն արի, ամա դրուստն ու ղուրթն Աստուած գիդէ։ Ինձ թէ կու հարցնիք քաղկի սաս կօսին իս չիմ աւտում, էնդուր վուր լըվի տօլ բանը ուղտ ին չինում. ախար էսէնց վունց կուլի, հէր օխնածնիր. օրինակ ասինք ղուրթ բիձէն փախցրուց, ինչ կօնէր մէ ձիզ իմ հարցնում. քիչ ունէր թէ ինչ է. փախցրուց ու էն էլ իր ախպուրմէն, ախպուր վուրթումէն. փիէ, էս ինչ իրգիր է միր իրգիրը տօ, անմիղ անդէթ մէ մէ էս հանդի բան միզ կու դնին մարթու։ Ախար Սանթուրինց Ալէքօն (Մակակօի մարթու բիձէն), էն անուանի հարուստ մարթը, էս հանդի բան վօնց կօնէր. չառ ին մօզմնի ձիր արիւր։ Տէր Աստուած, մի պատժի միզ էս հանդի չառերու համա։

* *

Ինչոր վուր էր հալրաթ էս սաս կօսի միղն էր, վուր Մակակօի մարթն ու սրա բիձէն, պարոն Ալէքօն, չատ տարի մէկ մէկու հիդ խառով էին։ Քանի մարթ մէջ ննգան, քանի տէրտէր մէջ գցեցին, սրանց բարիչէլու չարա չէլաւ. ամա առանց վիրջ վունչին չը կայ աշխարքումն ասում ին. Ալէքօի կնիկը մեռաւ ու չանցկացաւ մէ տարի, Աստծուծին արաւ, Ալէքօին մէ ուրիչ հալալ կաթնակիր ռասա էկաւ։

Օր վուտը տուն էղի էս կնիկը, Ալէքօի տուն ու տիղը գլխի տակն ու վրա էլաւ. չուրս օթախը ինը դառաւ, կլդատա պատիրը օսկէ դաջած թղթերով զարթարուեցաւ, ցընգրոտ բըլի մագիէր տասն ու հինգ մանեթանուց լաքիա կանգնեցաւ ու ինքը Ալէքօն էնէնց փոխուեցաւ, վուր ով կօսէր թէ էս էն 60 տարեկան Ալէքօն է, վուր չարթէնը մէ ջէր չապիքը ձլիւ էր փոխում ու իղոտ գդակով ման էր գալի։ Փա՛հ, Ալէքօն Ալէքօ դառաւ վուր կօսէիր փռանգստանիմէն էկած եարսուն տարեկան կարտինկա է՝ իղոտ գդակը մօղնի շլեապա դառաւ ու մզկած ղալամքարի ախալուխը մախմուր ժիլէտկա. ամա մէ մախմուր, մէ մախմուր, վուր ձեռը վուր քսում էր իրան էլ էր դուր գալի։ «Մէ մաիկ, Վարինկա ջան, ասում էր կնգան, կօսիս քու թչիրն ըլի։»

Էսէնց լուսաւուրից Վարինկէն Ալէքօին. ամա առանց վարձք լուսաւորութինը կորած է, փիքր արաւ Վարինկէն. վօնց կու սաղ դայ իր անունին, վուր իր սիրուն, ջէհէլ Ալէքօն խալխի խօսելու ըլի։ Ինչոր մարթիքն ու տէրտէրնիրը չը կանացին, ինքը պիտի կանենայ. էղի մտկումն ու կատարից։ Նրա ուզած բանին վօնց կանէր Ալէքօն հակառակուի. Ալէքօի սիրտը չինիլ էր խտակ մում ու վունցոր ուզում էր ձեռին էնէնց խաղցնում էր. էն խտակ մումն ուզում էր հրիչտակ էր չինում, ուզում էր սատանա, ուզում էր ձի, ուզում էր պառի ջորի ու վուրթէնն ուզում էր ջիլաւն էնթէնն էր քաշում։

«Արա խռովութինը վէս էկադրէրա, Ալէքօջան»։ Էս ասաւ ու դէմուդէմը ճաշին մեծրից, էնէնց, տանավարի, Մակակօին էլ ու Մակակօի մարթուն էլ։ Ննգաւ բարիչութինը։ Վաղուցուան միջնուրդնիրը մէքիչ նիղացան, վուր իրանք չը կանացին էս բանը վրա բերի. ամա Վարինկէն ինչ է հոգում, նա իր վարձքը կատարից ու իր խոստովանահօրմէն «օրհնեալ լինիսը» իր անկճով իմացաւ։ Խնդաց ու ճիտց Վարինկի մերը, վուր իր մէջկեմէն էս հանդի հրիչտակ Աստծու բհամ էկաւ աշխարքի էրեսին։

* *

Ինչ աւելացաւ էս բարիչութենեմէն Մակակօի մարթուն, դրուստը չիմ գիդի, Աստուած գիդենայ, ամա հաստատն էն է, վուր ինչ բարիչութենի առաջ էր, էլի էն խիղճ փէչաքարն էր։ Վունց հաքուստն էր փոխվի, վունց տունը... դէլէնկիկօ, դէլէնկիկօ, էլի էն Սէիդաբաթն էր ու Սէիդաբաթը, էլի էն քուչաբանդն ու էն քրհօվ տունը, թէ առաջ թէ հիմի։

Թէ Ալէքօն ղուրթ փաղցրած փուղ ունէր ու յիդ էրիա Մակակօի մարթուն, ինչ էլաւ էն փուղն ախար. կուլի թաքուն բանկը գցից, վուր իր վուրթկերանցը մէ օր պէտքը գայ. ամա վունց կուլի վուր մարթ իրէք չուրս հարուր թուման փուղ ունենայ ու նիղութենումը վունց գլխկին

ներից մինը և այն է, որ թուրք ամբոխի մէջ առհասարակ ոչ թէ միայն դժուար է, բայց և անհնարին է գրագիտութիւնը տարածել, որովհետև նրանց մէջ իրանց մայրենի լեզուով գրագիտութիւնը տարածելու համար պէտք է գործածել արաբական տառերը, որոնք շատ անյարմար են այդ նպատակի համար թէ իրանց գրութեան ձևի, կարդալու եղանակի, տպարանական նշանների բազմութեան, շարելու և վերջապէս ուսումնասիրելու կողմից։

Մահմեդական ցեղերը ընդունած լինելով իրանց դաւանութեան հետ, որ ծնվեցաւ Արաբիայում և արաբական գրերը, այդ գրերին պարտական են իրանց դարևոր անշարժութեամբ, և իրանց ամբոխի մէջ գրագիտութեան բացակայութեամբ....

Հարկաւոր է որ մեր թուրք մտածող մարդիկ, որոնց թանգ է իրանց մայրենի լեզուն և նրա կանոնաւոր զարգացումը, վերջապէս հոգային իրանց գրականութեան մէջ դիւրըմբռնելի, գրագիտութեան տարածման յարմար տառերը մտցնելու վերաբերութեամբ։ Եւրոպական գիտութենից ճանաչված է այն ճշմարտութիւնը, որ միայն այն գրերը կարող են մի հասարակութեան մէջ լուսաւորութեան կանոնաւոր տարածման հաստատ գործիչներ լինել, որոնք իւրաքանչիւր հընչիւնը արտայայտում են առանձին նշանով, կամ շատ շատ երկու նշանով, այն ինչ արաբական տառերը ոչ թէ առանձին առանձին տառանշաններով են արտայայտում լեզուի հնչիւնները, այլ իրանց մէջ միաւորված զանազան տառերի զուգութիւններով, որոնք իրանց նշանակութիւնը փոխում են երբ որ մի քանի կէտեր վերև կամ ներքև են դրվում։ Այդ տեսակ անշնորհ տառագրութիւնը, ճանաչված է գիտութենից, որ ամենամեծ արգելք է եղել գրագիտութեան և լուսաւորութեան տարածման։

Այն մտածող թուրքերին, որոնց, ասում ենք, թանգ է իրանց մայրենի լեզուի գոյութիւնը, հարկաւոր է վերջապէս մտածել մտցնել իրանց գրականութեան մէջ արաբական տառերի տեղ ուրիշ աւելի յարմար տառեր։ Եթէ ոչ, թող այդ լաւ յիշեն մեր թուրքերը, շատ ժամանակ չի անցկենայ,— և Կովկասում լուսաւորութիւնը թուրք ազգաբնակութեան մէջ հետզհետէ մուտք գործելով, նրանց մայրենի լեզուն ոչինչ հիմք չունենալով ժողովրդի գրագիտութեան և լուսաւորութեան մէջ՝ կանհետանայ աշխարհի երեսից։

Կ. Պոլսում մի քանի թուրք լրագիրներ հրատարակվում են այժմ հայոց տառերով, ընդունելով մի և նոյն ժամանակ հնգկաւորական լեզուների գրութեան եղանակը, այն է ձախ ձեռքից աջ ձեռքը,—և այդ լրագիրները շատ աջողվում են և կարողանում են թուրք լեզուի բոլոր հնչիւնները ճշգութեամբ արտայայտել։ Հայոց լեզուն շատ հարուստ է հնչիւններով, ուրեմն և նորա տառերը կարող են արտայայտել բոլոր ասիական լեզուների հնչիւնները։

Թող մտածեն այդ բանի վրա մեր կովկասեան թուրք ազգաբնակութեան սակաւաթիւ մտաւոր առաջնորդները, թող լաւ ըմբռնեն այն վտանգը, որ սպառնում է նրանց լեզուի գոյութեան տևողութեան, եթէ նոքա յամառութեամբ անպատճառ կուզենան պահպանել գարձեալ իրանց լեզուի մէջ արաբական տառերը, որոնք եղել են և կը լինեն միշտ նոցա ամբոխի մէջ լուսաւորութեան տարածման համար ամենամեծ արգելք։

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

20 Դեկտեմբերի

Մի քանի ժամանակ սրանից առաջ Մոսկվայի համալսարանի հրապարակական դահլիճում մի պարոն դիսերտացիա էր պաշտպանում։ Ես ևս այդ օրը ներկայ գտնվեցայ այնտեղ։ Բացի դիսերտացիայի մաքից և պարոնի օպոնենտների հետ վիճաբանութիւնից իմ ուշադրութիւնը գրաւեց մի բան. երկու տախտակների վերա գրած էին այն բարեգործ անձանց անունները, որոնք զանազան ժամանակներում մեծ գումարներ են նուիրել Մոսկվայի համալսարանին այն պայմանով, որ այդ գումարների տոկոսով գիտութեան զանազան ճիւղերի մէջ առաջադիմութիւն ցոյց տուող աղքատ ուսանողներին թոշակաւոր ընդունեն։ Այսպիսով համալսարանումը բացի թագաւորական, Կովկասեան կան և առանձին, ազգային,—հասարակական թոշակներ։ Ռուս հասարակութիւնը ազգի լուսաւորութեան վեմ գործի մէջ, օգնում է տէրութեանը. հասարակութիւնը ինքն աշխատում է բարձր ուսում տալ երիտասարդներին և այսպիսով պատրաստել իրա համար կրթուած, օգտաւէտ անդամներ և գործող անձինք։ Բայց տխրալին այն է, որ այդ բարեգործ անձինքների անունների թւում ոչ մի հայի անուն չը կար։ Այս երևոյթից սրտիս մէջ ծագեցին տխուր մտքեր. ինչու հայերը չունեն ազգային թոշակներ. ինչու չեն կազմում ընկերութիւններ, ժողովում գումարներ, որոնց տոկոսով աղքատ երիտասարդները կարողանային բարձր ուսում ստանալ։ Մինիկ հայ ազգը բաւականին հարուստ լինելով ընդունակ չէ, չէ կարող կամ չէ կամենում իւր հարազատ որդիքների կրթութեան վերա հոգս տանել։

Չը գիտեմ, այս խօսքերը կը մնան «ձայն բարբառոյ յանապատի» թէ չէ համակրութիւն կը գտնեն ազգի մէջ, բայց այսու ամենայնիւ իմ բարոյական պարտն եմ համարում իմ կողմից խօսել այն նպատակի վերա, որը այդ ապագայ ընկերութիւնները պէտք է աչքի առաջ ունենան. իմ կարծիքով միայն այն պայմանով կարելի է աղքատ կամ ցանկացող երիտասարդներին բարձր ուսում տալ, որ նոքա ուսումն աւարտելուց յետոյ որոշեալ ժամանակ (որը կախված է ապագայ ընկերութիւնների պայմանից) իրենցը նուիրեն ազգային գործերին, դառնալով ուսուցիչներ մեր միջնակարգ և բարձր ուսումնարաններում։ Այս բանին մենք շատ կարօտ ենք, իսկ մեր բարձր ուսում ստացած երիտասարդներ—ազգի այդ թարմ և զօրեղ ոյժը—ազգի համար ըստ մեծի մասին անօգուտ են կորչում։ Ահա ինչ պատճառով մեր Ռուսաստանում բարձր ուսում ստացած երիտասարդների մէկ մասը Կովկասեան կամ ուրիշ թոշակաւորներ լինելով, ստիպված է լինում երկար ժամանակ Կովկասի զանազան խորշերում ծառայել և շատ անգամ հեռի լինելով հայ հասարակութիւնից և շրջանից, չէ կարողանում օգնել ազգին, եթէ ցանկանար էլ. միւս մասը «դատարկ մանելով» համալսարան կամ ուրիշ բարձր ուսումնարան, և այնտեղից «գիտութիւնից զուրկ» դուրս գալով, դառնում է հայրենիք և բոլորովին անտարբեր է նայում ազգային գործերին։ Երրորդ մասը ուսում աւարտելուց յետոյ աւելորդ է համարում դառնալ հայրենիք—իւր ընիկ երկիրը—և օգնելով իւր եղբայրներին, կատարել այն բարոյական պարտաւորութիւնը, որը ազգը և հասարակութիւնը դնում են ամեն լուսաւորված անձի վերա։ Այսպիսով, կրկնում եմ, շատ երիտասարդներ անօգուտ են կորչում ազգի համար։ Միմիայն շատ քիչ մասն է իրեն նուիրում ազգային գործերին։ «Բայց մի ծաղիկը—ասում է ժողովուրդը—գարուն չի բերի»։—

Մինչդեռ ընկերութիւններ կազմելով և ազգային թոշակաւորներ ունենալով, ժամանակով մենք կարող ենք սպասել երիտասարդների մի խումբ, որոնք իրենց նուիրելով ազգային գործերին շատ օգուտ կարող էին բերել ազգին։ Շատ երիտասարդներ ուրախութեամբ կընդունէին ազգային թոշակը քան թէ ուրիշ։

Բայց ումից կարող ենք սպասել այսպիսի ընկերութիւններ... աղքատ և ճնշուած գիւղացիներից, անկիրթ արհեստաւորներից, ոչ, այլ հարուս վաճառականներից և բարձր ուսում ստացած երիտասարդներից, որոնք վաղուց այս բանի վերա ուշադրութիւն պէտք է դարձրած լինէին։ Ցիրաւի՝ հարկաւոր է խոստովանել, որ մեր կրթուած երիտասարդներից շատերը հարուստ չը լինելով, չեն կարող մեծ գումարներ զոհել, բայց միթէ նրանք չեն կարող առաջնորդող (инициаторъ) լինել այս վեմ գործի մէջ։

Որքան ինձ յայտնի է, միմիայն Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը արտասահմանում ունի թոշակաւորներ, եթէ չեմ սխալվում, պէտք է լինեն յիշեալ ուսումնարանի աշակերտներից։ Զարմանալին այն է, որ այդ ազնիւ և վեմ գործի մէջ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները միակողմանի են վարվում. մթթէ Կիրակոսը կամ Մարկոսը հէնց այն ժամանակ կարող են ազգին ծառայել և հարազատ որդի լինել, երբ այդ ուսումնարանում աւարտեն. ինչու ուրիշ ուսումնարաններում—դիցուք թէ գիմնազիօնում—աւարտած հայ երիտասարդներից Ներսիսեան դպրոցը չէ ընդունում թոշակաւորներ։

Աւելորդ չէր լինի, եթէ սուրբ էջմիածնումն էլ այս բանի վերա մտածէին. Ակադեմիայի ապագայ կրթուած ուսուցիչներ ունենալու համար, ընդունէին թոշակաւորներ Ռուսաստանի կամ արտասահմանի համալսարաններում ուսանողներին։ Կարծեմ Սուրբ Աթոռը Մոսկվայի Լազարեան ճեմարանում ունի թոշակաւորներ աւելի լաւ չի լինի այդ թոշակները փոխադրել մի որ և իցէ Ռուսաստանի համալսարան, քան թէ թողնել այդ միջնակարգ ուսումնարանում։ Ընթերցող, ես վերջացրի, տեսնենք ինչ կը լինի վերջը։

Սօլօ

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են որ այդտեղի հայոց հոգևոր դպրոցը իր հին գեղեցիկ բնակարանը վարձով է տուել, իսկ տեղափոխվել է մի նեղ, խոնաւ և անյարմար բնակարան, այնպէս որ կորցրել է իր հին աշակերտների մեծ մասը։ Ահա մեր հոգևորականութեան անընդունակութիւնը ազգային լուսաւորութեան գործը առաջ տանելու։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Տէր-Աբրահամեանցից ԲՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքում նորա հրատարակված օրացոյցը ներկայ 1877 թվի համար՝ «Ростовъ Нахичеванскій календарь» на 1877 г.

—

«Донская Пчела» լրագիրը առաջարկում է հիմնել ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ մի մատնաժողով որի նպատակը կը լինի հաւաքել դրամական միջոցներ յօգուտ փոքր-Ասիայի հայերի, ինչպէս որ Ախալցխայում տիկին Եզիսաբէթ Մամիկոնեան բացել է ստորագրութիւն նոյն նպատակով։

—

Ստացանք ԲԱԳՈՒԻՑ «Հայկական Աշխարհ» ամսագրի յայտարարութիւնը 1877 թվի համար Ցարական գինը 3 բուբլ։ Հասցէն այս է Баку. Архимандриту Хорену Степане. Редакція «Айкаканъ Ашхаръ» (Арм. Міръ).

—

Ռուս «Кавказъ» լրագիրը անցել է իր նախկին խմբագիր պ. Ստավինսկու ձեռքից պ. Վ. Օրոնովի ձեռքը և կը հրատարակվի այժմ ամեն օր։ Խմբագրատունը գտնվում է Վէլիամինովկի փողոցի վրա, Խոսրովի տանը։

—

ձեռը տայ, վունց չահին. չէ ձիր արիւը, սուտ ին մօգոնի. ինչ փուղ, ինչ փախցնիլ։ Խա լաւ իմ անում, վուր քաղկի ասա կօսին չիմ աւտում։

* * *

Էն գլխէն ասի, վուր շաբաթ օրը լուսանում էր ու Մակակոն մէ մինձ փառքի պիտի արժանացիլ էր։

Ինչ էր էն մինձ փառքը։

Վարինկի մարթ Ալէքօն, թէ կնգայ աղանչաք ու պաղատանքով էր, թէ ինքն իրան իրան էր փիքր արի վուր յաւիտենական յիշատակ թողնէ, տնիրը նուր մէկանց տակն ու վրէն էր արի ու մէ սարքիլ էր, մէ սարքիլ էր, վուր լիզու չի յիդ ասի։

Էս նուրմէկանց սարքած ու կարքած տնէրումը, հէնց էն շաբաթ օրը, Վարինկէն մինձ վէչեր ունէր ու էս վէչերումը Մակակոն մեձրած էր։

Գանայ Մակակոն էլ վէչեր չէր տեսի, էլ լօսօ չէր խաղացի. վունց չէ, ամա էն տեսած վէչերնիրն ու լօսօն վունվրդի գուքէր էս հանգի վէչերի հիդ։ Ո՞վքիր էին տեսած վէչերնէրումը՝ Թուլուխինց Նատալիէն, Զափրասանինց Անանին, Գաբղինց Սօվիսն, Խնգօինց Քալին, Գանդումինց Մարիամը, դիսի էսթավուր օմքնիր, իրան Մակակօիմէն ինչով էին լաւը։ Ամա Վարինկի վէչերումը, հը, նրանք վիս էկաղէրէբիան. դիսի մինձի մինձ օմքնիր, ձիր արիւը՝ Մօգնինց Նատաչէն, Բուդաղինց Անիչկէն, Լաղլաղինց Գարինկէն, Կոմբոստինց Քալինկէն, ՏիվԹիվինց Մաչինկէն, Քիրմանինց Սաչինկէն ու էլի աւտաս քարսուն

* * *

Էն բաղտաւոր շաբաթ օրը, աչկիրը բաց արաւ Մակակոն թէ չէ, էս վէչերը միտը ննգաւ ու էն սնաթին հէնց գիդէր արեգագի չուխկը, վուրնոր Մակակօի հիդ նուր էր զարթում, դէմուդէմը սրտին հասաւ։ Էսէնց ուրախ քիչ էր նա աչկը բաց արի. ամա ինչրու արեգակը թամամ դուս էկաւ, Մակակօի ճակտի վրա մէ ինչոր ամբ անցկացաւ։ Գնալը ուրախ էր ու մինձ փառք էր. ամա վայ թէ մարթու տուած իրիք մանէթը Վարինկի լօսօին հէրիք չը գնայ. ինչ անէ, վունց օտկէ էստուրը։ Էս փքրիրը միտքը խաւրեցնում էր։

Ջէր առաջի գիշիր, իրիգնահացին վուր նստած էին, Մակակոն շատ ուսուլ փուսուլնիր բանեցրուց մարթու մօդ, վուր էգէբա աւելի իմքին դուս գէլէ, ամա դուն չը մեռնիս, իրիք մանէթը, իրիք մանէթ էր։ Շատ ասաւ մարթուն թէ՝ ամութ է, իրիք մանէթով էն հանգի միծաղլանները մօդ նստիլ չի ելի, թէ էն լաւ է վուր իստակ ջոգուի նրանցմէն ու իսկի չը խառնուի նրանց մէջը, կանց թէ գնայ ու խայտառակուի. ամա մարթու խօսքը դիսի էն էր թէ՝ «էն էլ հառամ է, ինչոր տուիլ է, գուզէ էն է ու չի ուզի թէգուզ իսկի էլ չը գնայ, գլուխը նա էլ քար տայ, բիձանք էլ»։ Էս խօսքի էգնէն Մակակոն գլուխը կռացրուց ու Մակակօի մարթը չարէքաը սրանց վրա լաւիրը։ Փառք չէր սրանց մօդ նստիլը, էն էլ մինձ փառք, բան ինչ զարուամար էր։ Ափսուս, ափսուս իմ հալալ միամիտ Մակակօ ջան։

* * *

Էն բաղտաւոր շաբաթ օրը, աչկիրը բաց արաւ Մակակոն թէ չէ, էս վէչերը միտը ննգաւ ու էն սնաթին հէնց գիդէր արեգագի չուխկը, վուրնոր Մակակօի հիդ նուր էր զարթում, դէմուդէմը սրտին հասաւ։ Էսէնց ուրախ քիչ էր նա աչկը բաց արի. ամա ինչրու արեգակը թամամ դուս էկաւ, Մակակօի ճակտի վրա մէ ինչոր ամբ անցկացաւ։ Գնալը ուրախ էր ու մինձ փառք էր. ամա վայ թէ մարթու տուած իրիք մանէթը Վարինկի լօսօին հէրիք չը գնայ. ինչ անէ, վունց օտկէ էստուրը։ Էս փքրիրը միտքը խաւրեցնում էր։

Ջէր առաջի գիշիր, իրիգնահացին վուր նստած էին, Մակակոն շատ ուսուլ փուսուլնիր բանեցրուց մարթու մօդ, վուր էգէբա աւելի իմքին դուս գէլէ, ամա դուն չը մեռնիս, իրիք մանէթը, իրիք մանէթ էր։ Շատ ասաւ մարթուն թէ՝ ամութ է, իրիք մանէթով էն հանգի միծաղլաններու մօդ նստիլ չի ելի, թէ էն լաւ է վուր իստակ ջոգուի նրանցմէն ու իսկի չը խառնուի նրանց մէջը, կանց թէ գնայ ու խայտառակուի. ամա մարթու խօսքը դիսի էն էր թէ՝ «էն էլ հառամ է, ինչոր տուիլ է, գուզէ էն է ու չի ուզի թէգուզ իսկի էլ չը գնայ, գլուխը նա էլ քար տայ, բիձանք էլ»։ Էս խօսքի էգնէն Մակակոն գլուխը կռացրուց ու Մակակօի մարթը չարէքաը նուցը վրա քաշից։ Մէքիչ վուխտ էլ մէկ մէկու հիդ չը խօսեցան. բէդամաղութիւնն էր պատճառը, թէ խրամուլը, վուր փուչը բօղաղը չը ննգնի։ Էսէնց ուսա ու փուս մնացին էրկուսնէուէտ ինչրու Մակակօի մարթը խրամուլի գլուխը վիկալաւ, քալէն էդի բերանն ու դունչը թավաղ արաւ իր կնգան։ Ինչոր վուր էր, իր կնիկն էր, ինչ անիս. էստու վրա Մակակոն ծիծաղեցաւ ու կցից նուր մէկանց իր գէթաղէն ու չէնի ճիրիմէն. ամա Մակակօի մարթը մէկ վուր աչքիրն օլբրից ու ասաւ՝ «ձէնդ, թէ չէ սուփրէն գլխիդ թափտուի», Մակակոն աչքարա տեսաւ, վուր էլ վունչիչը չի օտկի։

Լաւ մարթ էր Մակակօի մարթը, հա՛ Աստուծու. ամա մէ խասիաթ ունէր, վուր իր ասած բանը, տիղ ննգած տիղը ձեռով ու մուշտով էր հասատատում, էլ լիզուին աւելի զօր չէր տալի։

Էս միտն էրի Մակակոն ու սաս ու սօրաքը կարից։

Էն գիշիրը թէ Մակակոն էլի իմքին ասաւ մարթուն էս բանի վրա, եա ինչ ասաւ, իս վրա հասու չիմ. ամա բանն էն է, վուր շաբաթ օրը վուր լուսացաւ, էն իրիք մանէթին մէ գրօշ չէր աւելցի։

* * *

Շատ բանիր փիքրարաւ Մակակոն շաբաթ առուտիան էրէս լուանալիս, շատ անիծքնիր ղըրգից լօսօ մօդնոզի գլխին ու արեւուն. ամա վիրջն էն էր դուս գալի, վուր էն գիշիրը նա պիտի գնացիլ էր ձալօի վէչերը ու իրիք մանէթէն աւելի չունէր։

Գնայ ինչով գնայ ու չը գնայ վունց չը գնայ ախար, էն հանգի թամաչէմէն վունց զրգուի մարթ, համ էլ ձլիս բարիչութիւնը ննգիլ է ու վայ թէ ձալօն բէդամաղ ելի ու նուրմէկանց անմիզ անգէթ էլի խուվութիւն պատահի։

Մակակոն էսէնց էր կարծում ձալօի վրա ու ձալօն, ինձ թէ կու հարցնիք, աւտաս խիստ ուրախ էլ կուլէր, վուր Մակակոն իսկի էլ չէր գնացի. աբա ինչ Մակակօի տիղ էր, վուր էն հանգի մօդնի ախչկերանց մէջը ձգուիլ էր. ինչ անիմ թէ սիրուն էր ու էն էլ խիստ սիրուն։ Դարդակ սիրութիւնը ինչ... էլի մէ հարուստ մարթու կնիկ էր էլի Մակակոն, Վարինկի համա էլ փառք կուլէր. ամա ինչ անիս չարա բէչարա էլի պէտի կանչիլ էր, մէկ վուր Մակակոն բէդամաղ չէր էլի ու էլի նուր մէկանց ասա կօսէքը չէր զարթի, մէկ էլ վուր Ջանդամը Մակակօի գլուխը, թող գայ ու խալխը տեսնէ Վարինկի թաւդարլութիւնը։ Աստուծուն յայտնի էր նրա արած վարձքը, վուր բարիչութիւնը զգից ու էս վարձքը ինչի պիտի թաքցրիլ էր իր զօնաղներու մօդ, թող նրանք էլ տեսնին ու սովրին, վուր վարձքը լաւ բան է։ Դէղէն մեռնի քու վարձկադար Ջանին, Վարինկա։

Մէ խօսքով Մակակօի սրտումը հատատուեցաւ, վուր նա էն գիշիրը պիտի գնա ձալօի վէչերումը, թային, թային պիտի գնա...

Ամա փառը։

(Կը շարունակուի։)

Մեզ գրում են ՄՕՍԿՎԱԶԻՑ դեկտեմբերի 20-ից՝ «Մի քանի օր առաջ ցուրտը Մոսկվայում հասաւ մինչև—35° R. Բայց յանկարծ եղանակը այնպէս փոխվեց, որ ձիւնը կրկին սկսեց հալվել։ Այդ։ միջոցում միայն—2° R. ցուրտ էր։ Այս երկու օր է որ ցուրտը օրից օր կրկին սաստկանում է։»

—

ԴԵՐԲԻՆԴԻՑ մեզ գրում են որ դեկտեմբերի 17-ին հայ սիրողների խումբը Կլուբի դահլիճում ներկայացում տուեց յօգուտ Սերբիայում վիրաւորված ռուս զինուորների։ Ներկայացրին Սունդուկեանցի «Պէպո» և Պէչիկ-Թաշչեանի «Աւազակներ» վոդեվիլը։ Ներկայացմանը մասնակցեցին քաղաքի բարձր դասի ընտանիքները։ Գեղեցիկ սեռի ներկայացուցիչները որոնք դուրս եկան բեմը սրանք էին՝ տիկին և օրիորդ Սառաջեաններ և օրիորդ Մ. Մաղաթեանց։

—

ԴԱՇԼԱՂԱՐ գիւղից մեզ գրում են որ այդ կողմեր մահմեդականները սաստիկ աւազակութիւններ են անում, գիւղից գիւղ զինաւորված խմբերով մանդալով։

—

Շնորհակալութեամբ ստացանք ՄՕՍԿՎԱՅԻՑ Կայսերական Տէխնիկական Ուսումնարանի տարեկան հանդիսահաչիւը «Отчетъ и Рѣчь»։ Այդ գրքի մէջ բացի տարեկան հաչից կան և մի քանի հետաքրքիր յօդվածներ տնտեսական և տէխնիկական բովանդակութեան։

—

Ամեն օր Ռուսաստանում նոր մանկութիւններ են պատահում։ Պ. Լուրի որ մանկացել է, այժմ արիւնի հարուած է ստացել (ապօպլէկսիական հարուած)։ Որովհետև վեց ֆիրմա դարձեալ յայտնեցին իրանց մանկ, ինչպէս լսել է «Новое Время» հարց է բարձրացած որ գրամ դնողները կարող են միշտ քննել բանկերի հաշիւները իրանց ապահովութեան համար։

—

ՐԻԲԻՆՍԿ քաղաքից գրում են «С. Пет. Вѣд.» լրագրին որ այդ քաղաքում 9 ֆիրմա մերժել են վճարել իրանց պարտատէրերին մօտ մէկ միլիօն ու կէս բուբլ։

—

Մեզ խնդրում են տպել ԲԱԳՈՒԻՑ ուղարկված հետեւեալ հրաւէրը՝ «Բարձրագոյն հրամանաւ հաստատուած Մարդասիրական Ընկերութեան խորհրդական ժողովի 1876 թուականի հաչիւը պիտի առաջարկվի յունվարի 25-ին բոլոր անդամոց Ընկերութեան, վասն որոյ ըստ յանձնարարութեան խորհրդական անդամոց, պատիւ ունիմ հրաւիրել Ընկերութեան անդամներին չնորհ բերել նոյն օրը ի 4-որդ ժամու յետ կիսաւուր Ընկերութեան Խորհրդարանը, վերոյիշեալ հաչիւը քննելու համար։—Ատենադպիր Ս. Վարչամեանց։

—

Յունվարի 17-ին, երկուշաբթի օրը, ինչպէս լսում ենք, ԹԻՖԼԻՍԻ մի քանի հայ տիկիններ, օրիորդներ և պարոններ դիտաւորութիւն ունեն մի հայերէն ներկայացումն տալ բարեգործական նպատակով թատրոնի դահլիճում։ Կը ներկայացնեն Գ. Սունդուկեանցի «Էլի մէկ զոն» կոմեդիան։

—

Մենք լսում ենք որ ՄՕՍԿՎԱՅԻ հայ ուսանողութեան մի մաս վճռել է սորագրութիւն բանալ մեր Թիւրքիաբնակ թշուառ, անօգնական, մոռացված հայ-եղբայրների համար։ Այժմ յարմար առիթ կայ այդ գործը իրագործելու համար, երբ որ Վանի հայ ազգաբնակութեան մի մաս այդքան վնասվել է սարսափելի հրդէհի պատճառով։ Որքան և ուշ լինէր այդ տեսակ բարի գործ, բայց այնու ամենայնիւ նա արժանի է կատարեալ համակրութեան ամեն մի մտածող և զգացող հայի կողմից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

—

Իւրաքանչիւր ազգ կարծես ունէ իւր հերթը պատմութեան ասպարիզի մէջ և այդ հերթը և նորա դեր խաղալը սկսվում է այն օրին, երբ այդ ազգը իւր դարաւոր խոր քնից զարթնում է, նայում է շուրջը, սկսում է իւր համար հոգալ, ճանաչում է իւր «ես»ը, սկսում է մարդկութեան յառաջադիմութիւնը գործադրել, գոնէ այլ ազգերի մշակած գաղափարները, իդէալները իւր ընտանեկան, հասարակական և քաղաքական կանքին յարմարացնել։

Այն ազգի ապագան կորած է, որին այդ հերթը իւր ժամանակին չէ հանում, որը դորանից առաջ կորցրած կը լինի արդէն իւր անունը պատմական շրջանից։ Բայց թէ ինչ միջոցներով մի ազգ կարող է պահանջել մարդկութեան իրաւունքները և իւրեան սեպհականացնել նոցա,—դա այլ խնդիր է։ բայց այստեղ միայն նկատենք, որ եթէ մի ազգ, որպէս և իւրաքանչիւր մի անհատ, եթէ ունէ այդ կէտին հասնելու ընդունակութիւն, նա կը հասնէ նորան, նորան ոչ մի բան կարող չէ արգելառիթ լինել։ Արևելեան հարցը մեզ համոզեցնում է, որ մինչև անգամ Թիւրքիայի նման բռնի կառավարութիւնը, նորա խարդախ քաղաքականութիւնը, նորա հարիւր հազարաւոր կրօնամոլ ու կատաղի զինուորները անգամ դեռ թոյլ միջոցներ են մի ազգի այն վերոյիշեալ ձգտումը ու ցանկութիւնը խլելու համար։—Մինչև այժմ Թիւրքիայի ընդարձակ տէրութիւն կազմող տարրերը քընած էին, գոնէ գործնականապէս։ Բայց սխալ կը լինէր կարծել, թէ նոքա և բարոյապէս բոլորովին մեռած էին։ Մեռածը չէ գործում, քնածը կարող է զարթնել, իսկ հիւանդը—առողջանալ։ Բայց վա՜յ այն բժշկի հալին, եթէ հիւանդը առողջացած իմանում է, թէ բժիշկը չար խորհուրդ է ունեցել և նորա հիւանդութեան պատշաճ դեղ տալու փոխարէն, թոյն է ուղեցել խառնել դեղի մէջ։ Նոյն իսկ այդ յարաբերութիւններին են ենթարկուել այժմեան Թիւրքիայի մինչև այժմ հլու հպատակ բռնադատուած քրիստոնեայ ազգերը։ Հերթը հասաւ և նրանց։ Արիւնը խաղաց, ուշը եկաւ գլուխները, ազատութեան սրբազան զգացմունքը թելադրեց նոցա մէջ արդարութեան օրէնքներ պահանջելու իրաւունքը։ Կը հանեն նոքա (բոլոր քրիստոնեաները) այդ նպատակին, թէ ոչ։ Եթէ ընդունենք այն, արդէն հաստատուած ճշմարտութիւնը, թէ աշխարհս միշտ գնում է առաջ, ուրեմն բարին միշտ յաղթում է չարին, արդարութիւնը—անարդարութեանը, մեր հարցի պատասխանը ուրեմն դրական պիտի լինի և կը պատասխանենք «այո»։ Ուրիշ հարց է, երբ և ինչպէս. բայց անկասկածելի է, որ սկիզբը արդէն արած է և օրինաւոր կերպով։ Ո՞վ էր մինչև այժմ մտածում Թիւրքիական սլավօնացիների, հայերի, յոյների մասին։ Իսկ այժմ դորա հակառակը—ո՞վ չէ մտածում նոցա մասին. ո՞ւմ սիրտը չէ բախում Թիւրքիական քրիստոնեաների վերա մտածելիս։ Այդ հարցը զբաղեցնում է այժմ և բաւականի ժամանակ առաջ ամբողջ գիտնական աշխարհը մեծից մինչ փոքրը, դիպլոմատներից սկսած մինչ հասարակ գիւղացին։ Այն քաղաքական մարդիկը, որոնց իսկական կարծիքը իմանալու համար հազար ու մէկ խընդիրներ պիտի առաջարկուէր, հազար ու մէկ քաղաքական հնարքներ պիտի գործադրուէր,—այսօր այն մարդիկը առանց նեղութեան և մեծ ուրախութեամբ շտապում են յայտնել իրանց գաղափարները ամենաանկեղծ, անշահ ու պարզ կերպով։ Ասածիս ամենապարզ օրինակը Ագլեան է իւր գլխաւոր ներկայացուցիչներով։ Միջոցները զանազան են. ոմանք լրագիրների միջոցով, ոմանք բրոշիւրներով, ոմանք դասախօսութիւններով, ժողովներով և այլն և այլն։ Նպատակը մի է—պարզել որքան կարելի է այդ վերին աստիճանի կնճռոտ խնդիրը։—Բայց առաջ քան դատել, խօսել, վճռել, մի որ և իցէ բանի վերա, հարկաւոր է նորա էութեան հետ ծանօթանալ. արևելեան ազգերը անծանօթ էին գիտնական աշխարհին իրանց դիրքով և կեանքով։ Եւ ահա մէկմէկու յետևից սկսեցին գրեանք լոյս ընծայել Թիւրքիայի քրիստոնեաների մասին այն անձերը, որոնք շատից փոքրից տեղեկութիւն ունէին նոցա մասին։ Բայց այդ բաւական չէր. բուն էութեան հետ տեղեկանալու համար շատ լրագիրների թղթակից ու գործակիցներ գնացին Թիւրքիա։ Դուրս եկան գրվածներ արևելեան քրիստոնեաների վերաբերեալ և երևելի քաղաքագէտների և հեղինակների գրչի տակից։

Արևելեան հարցը բերաւ այն օգուտը, որ պարզ ցոյց տուեց իւրաքանչիւր ազգի քաղաքականութիւնը և ինչ առաւելն է՝ իւրաքանչիւր ազգի, ով ձեռնամուխ է եղել այդ հարցին, նորա որքան աստիճանի զարգացած լինելը։

Մի զարմանալի համոզմունք թելադրեց բոլորի մէջ անգլիական ժողովրդի յուզմունքը վերջին ժամանակներում (ժողովուրդը և ոչ տէրութիւնը)։ Եթէ հետևելու լինենք Անգլիայի ազատամիտ լրագիրների կարծիքներին, դորա հետ միասին և մինչև անգամ աւելի նշանաւոր անգլիական այժմեան քաղաքական մարդիկների կարծիքներին, մենք կը համոզուենք, որ դեռ այդպիսի ազգ, որի ընդհանուրի շահերը միշտ բարձր են քան անհատներինը, որի աչքում ոչ թէ Թիւրքիայի հպատակ Սլավօնացու բռնադատուած լինելը ցաւալի է, որովհետև նա սլավօնացի է, կամ մինչև անգամ քրիստոնեայ, այլ ցաւալի է և կարեկցութեան արժանի, որովհետև սլաւոնացին ևս մարդ է։ Ահա՛ այդ հայեացքն է, որ ստիպում է այնպիսի ընդհանրացած, աղեցութիւն ունեցող, ժողովրդի սիրեկան մարդիկներին, որպէս Բրայտը, Գլադստոն և այլն հոգալ Թիւրքիայի հպատակ բոլոր քրիստոնեաների համար և ընդդիմանալ անգլիական առաջին նախարարի ցանկութիւններին։ Ժողովուրդը նորա դէմ է, ահա՛ ինչն է ամենագլխաւորը։ Ժողովրդի այդ ցանկութիւնն է, որ ստիպում է իւրաքանչիւրին անգլիական ազգի վերա բարձր կարծիք ունենալ։

Երանի այն ազգին, որը ունի այդպիսի ժողովրդական ներկայացուցիչներ։

Լայպցիգ. դեկտ. Ա. Ա.

ՀՐԷԱՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ

—

Ընթերցողը կը կարդայ ներկայ համարի արտաքին լուրերի մէջ այն հաղորդութիւնը, որ Ֆրանսիայի հրէաները, որոնք կազմած ունեն «Alliance Izraelite» անունով մի ընկերութիւն, մի աղերսագիր են ներկայացրել Կ. Պոլսի կօնֆէրենցիային, որի մէջ խնդրում են Սերբիայի և Ռումինիայի հրէաների համար ուրիշ բնակիչներին հաւասար իրաւունքներ։

Հրէական ազգը եւրօպական երկիրներում գրեթէ մինչև վերջին ժամանակները չէր վայելում ուրիշ հպատակներին հաւասար իրաւունքներ։ Այժմ եւրօպական երկիրների մեծ մասի մէջ հրէաները կատարեալ հաւասար իրաւունքներ են վայելում պետութեան միւս հպատակների հետ։

Շատ անգամ մեղադրում են այդ ազգը որ նա իր բնաւորութեան մէջ ունի վատ, ստոր յատկութիւններ, բայց չեն մտածում որ այդ ստոր յատկութիւնները բնականապէս պէտք է զարգանային, որովհետև հրէան դարերով ճնշված, հալածված, ստորացրած է եղել գտնվել է միշտ ամենաանտանելի ստրկութեան մէջ ամեն երկիրներում։ Իսկ ստրուկը երբէք այնքան ազնիւ չէ կարող լինել, որքան ազատ մարդ։

Բայց այնու ամենայնիւ, չը նայելով դարեւոր ստրկութեան, հրէան պահպանել է և մի քանի մտաւոր և բարոյական բարձր յատկութիւններ, պահպանել է մտաւոր ոյժի թարմութիւնը, աշխատանքի զարմանալի տոկունութիւնը և բազմակողմանի ընդունակութիւնները։

Շնորհելով հրէաներին մնացած հպատակներին հաւասար իրաւունքներ, ամեն պետութիւն ստանում է նոր ոյժեր, հարստանում է, աւելացնում է աշխատասէր, ընդունակ, տաղանդաւոր, բազմակողմանի զարգացած հպատակ անհատների թիւը։ Այն երկիրները, որոնք բազմաթիւ հրէայ հպատակ ունենալով, մերժում էին նրանց ամենաանհրաժեշտ մարդկային իրաւունքները, միշտ պատժված էին լինում տեւողական անշարժութեամբ։

—

ԹԻՒՐՔԻԱ

—

«Politische Correspondenz» լրագիրը հաղորդում է որ կօնֆէրէնցիայի մնացեալ նիստերից մինի մէջ ռուսաց դեսպան գեներալ Իգնատիէվ կը յարուցանէ Թիւրքիաբնակ հայերի խնդիրը, որովհետև ինստրուկցիաներում, որոնք տրված են ռուս դեսպանին իր տէրութենից խօսվում է ոչ թէ միայն սլավօնացիների պաշտպանութեան մասին, բայց և բոլոր Թիւրքիահպատակ քրիստոնեաների մասին։ Ցիշեալ լրագիրը աւելացնում է որ Ռուսաստանի հայերը իրանք դիմեցին ռուսաց տէրութեանը խնդրելով պաշտպանել իրանց ցեղակիցներին, որոնք Թիւրքիայի լծի տակ են ճնշված։—«Тифл. Вѣстн.» լրագրում կարդում ենք հետևեալը՝ Վանից հեռագրում են Կ. Պոլիս որ այդ քաղաքի բազարը այրվեցաւ։ Այդ դժբաղդութենից օգուտ քաղեցին Թիւրքաց կանոնաւոր և անկանոն զօրքերը ապրանքները կողոպտելու համար։ Հայոց պատրիարքը և Վանի բնակիչները, որոնք Կ. Պոլսում են բնակվում գանգատով դիմեցին տէրութեանը։ Գործը քննելու համար Բ. Դուռը նշանակեց որպէս քննիչ Խրիմեան արքեպիսկոպոսին։ Վանի բնակիչները դիմեցին նոյնպէս Ամերիկայի դեսպանի միջամտութեանը։ Դեսպանը ընդունեց հայոց խնդիրքը և հեռագրեց Կ. Պոլսից Վանի ամերիկական միսիոնարութեանը, բայց դեռ պատասխան չը ստացաւ։—Նոյն տեղ կարդում ենք որ Թիւրքաց տէրութիւնը պահանջեց հայոց պատրիարքից 50,000 հայ զինուորներ, որի փոխարէն խոստանում է շնորհել հայերին Մեծ-Հայաստանի ինքնավարութիւնը։ — «Hamburger Correspondent» լրագրին գրում են Ս. Պետերբուրգից թէ Թիւրքիայի կառավարութիւնը շուտով առիթ կունենայ իր ցանկութիւնը իրագործելու, բոլոր իր հպատակներին հաւասար իրաւունքներ և վերանորոգութիւններ շնորհելով, ոչ թէ միայն պետութեան եւրոպական բայց և ասիական գաւառներում։ Ռուսաց կայսերական կառավարութեան ցանկութեան համեմատ գեներալ Իգնատիէվ կօնֆէրէնցիայի եկող նիստերից մէկում պէտք է «Հայերի խնդիրն» էլ բարձրացնէ, որովհետև նորան տուած հրամանների համեմատ նա պիտի ոչ միայն Թիւրքիայի հպատակ սլաւօնացիներին, այլ և առհասարակ քրիստոնեաներին պաշտպան լինի։ Իգնատիէվին տուած հրամանը հայոց հարցի վերաբերութեամբ պատճառված է եղել մի ադրէսով, որ հասել է Կայսրին և որ Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայէվիչին ներկայացրած է եղել Ռուսաստանի հայերի կողմից, որոնք խնդրում են պաշտպանութիւն և օգնութիւն Թիւրքիայի մէջ տպրող ցեղակիցների համար։ Արդէն քանի ամիսներ է, որ Կովկասում հրատարակվող լրագիրները, մանաւանդ հայոց «Մշակ» և «Դրօշակ» (?) լրագիրները անդադար ուշադրութիւն են դարձնում Փոքր-Ասիայի հայերի անտանելի դրութեան վրա։—Ղարսից մեզ գրում են որ այդ քաղաքում կայ այժմ 8000-ի չափ զօրք, բայց զինուորներից շատերը քաղցածութենից և մերկութենից հիւանդ են։ Զօրքի մէջ շատ մեռնող կայ։ Զինուորները սմիսներով և ամբողջ տարի անգամ ռոձիկ չէն ստանում։ Զօրքից շատ փախչող կայ։ Դարուցը գալուն պէս աւելի էլ փախչող կը լինի։ Օսմանեան կառավարութիւնը Ղարսի բոլոր գիւղերի վրա մի բոլորովին նոր, չը լսված, ծանր հարկ է դրել իւրաքանչիւր գիւղի վրա 100—300 սօմար ցորեն, գիւղի մեծութեանը համեմատ իւրաքանչիւր տան վրա երկու սօմար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վերջին հեռագրերը, որոնք ստացված են Թիֆլիսում, բաւական հակասում են միմեանց՝ մինը հաւատացնում է թէ արեւելեան հարցի վճիռը խաղաղական կերպարանք է ստանում, միւսը թէ ընդհակառակն պատերազմը անփախչելի է։

—Լրագիրները հաղորդում են Կ. Պոլսի մէջ Թիւրքաց սահմանադրութեան չքեղ հրատարակման մանրամասները։ Մենք ցաւում ենք որ տեղ չունենք այդ տօնախմբութիւնները մանրամասն նկարագրելու համար։

—Կ. Պոլսի «La Turquie» լրագիրը հաղորդում է որ այժմ կազմվում է Կ. Պոլսում ազգային միլիցիա, որ բաղկացած կը լինի ոչ թէ միայն մահմեդական զինուորներից, բայց և Թիւրքաց այլադաւան հպատակներից։

—Վիէննայի «Presse» լրագիրն հեռագրում են Բերլինից, որ եթէ Կ. Պոլսի կոնֆերէնցիան ոչինչ դրական հետևանքի չի հասնի, այն ժամանակ Անգլիայում կը պատահէ մինիստրութեան կրիզիս, այսինքն Լորդ Բիկոնսֆիլդ (Դիզրաէլի) հրաժարական կը տայ իր պաշտօնից։

—Հրէաների ընկերութիւնը, որի գլխաւոր մասնաժողովը Ֆրանսիայումն է, վճռեց ներկայացնել մի ադրէս կոնֆերէնցիային, որի մէջ նկարագրումէ Սերբիայի և Ռումինիայի հրէաների դրութիւնը։ Երևում է որ ֆրանսիական տէրութիւնը համակրութեամբ պիտի ընդունէ «Alliance Izraelite» հրէական ընկերութեան դանդատագիրը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին ժամանակները Թիւրքիայի հայ լրագիրները սկսել են չատ անճիշդ համանել մեր ձեռքը, իսկ մի քանիսներ բոլորովին էլ չեն գալիս։ Մենք քանի անգամ առաջարկած ենք Թիւրքիայի հայ լրագիրներին փոխանակել իրանց հրատարակութիւնները մեր լրագրի հետ, բայց չը գիտենք ինչի նրանք այդ չեն կամենում անել։ Մենք այս տարի Կ. Պոլսի և Զմիւռնիայի հայ խմբագրութիւններից ոչ մէկին չենք ուղարկի մեր թերթը, մինչև որ նրանցից չը ստանանք փոխադարձապէս նրանց թերթը։

* * *

Ռուսաստանում կայ մի հնացած օրէնք, որի զօրութեամբ հրէաները իրաւունք ունեն ապրել միայն հարաւային Ռուսաստանում, իսկ Անդրկովկասում հրէաներին արգելված է ապրել եթէ նրանք այդտեղ հաստատ արվեստներով չեն պարապում։ Այժմ Թիֆլիսի պօլիցիան յանկարծ յիշելով այդ հնացած օրէնքը, սկսում է աքսորել Թիֆլիսից պատուոր վաճառական հրէաներին, որոնք Օդէսայից, կամ այլ տեղերից են եկած, տալով նրանց այնպիսի անցագրեր, որոնք տրվում են միմիայն յանցաւորներին։ Ամեն երկրում կարող են լինել հնացած օրէնքներ (օրինակ Անգլիայում այն տեսակ օրէնքներ կան, որոնք եթէ կատարվէին, Անգլիան չէր լինի այժմեան ազատ երկիրը), բայց այդ օրէնքները եթէ հակառակ են ժամանակի պահանջմունքին և ոգուն, չեն կատարվում։

* * *

Մի երիտասարդ ֆրանսիացի ցանկանում է ֆրանսիական լեզուի տեսական և գործնական դասեր տալ։ Դիմել պէտք է «Մշակ» լրագրի խմբագրատունը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼԻՑԻԼԵԱՆ
միջոց ատամների համար
Է. Է. ԱԴԻԷԼՀԱՅՄ
ատամնաբոյժի

Փորձված լինելով բժշկական պրակտիկայով, սալիցիլեան պրեպարատները, բժշկական առաջին հեղինակութիւնների հետազօտութիւնների շնորհով ստացան մեծ անուն, որպէս առողջապահական ամենալաւ միջոցներ բերանի և ատամների համար առաջարկվում են հեղուկի (բերան ողողելու համար) և ատամների փոշեի ձևով, նրանով են յայտնի, որ պահպանում է ատամները փչանալուց և ոսկորի փտելուց, առաջ են առնում ատամների վրա քանի կազմվելուն, այժ են տալիս ծնոտին և բերանին հաճելի թարմութիւն են տալիս

Գինը ատամների սալիցիլեան

էլեկսիրի	1 ր. 25 կ.
» » փոշեկ.	1 » 25 »
» » պաստայի.	1 »
» » մաստիկի (ատամները պլոմբելու համար)	1 »
» ատամների կաթիլներ.	» » 50 »

Այդ տրդիւնքը օպտով և մաս մաս Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Ց. Ս. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկ. մաս։

Въ Тифлисѣ у Цуринова 6 (12)

Объ изданіи въ 1877 году
«ДОНСКОЙ ПЧЕЛЫ»
ГАЗЕТЫ
ПОЛИТИЧЕСКО-ЛИТЕРАТУРНОЙ

Съ 1-го января 1877 года «донская пчела» будетъ издаваться по той же программѣ, какъ и въ текущемъ 1876 году, два раза въ недѣлю: по четвергамъ и воскресеньямъ, по одному листу большаго формата въ 5-ти столбцахъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

съ доставкою въ Ростовѣ на-дону:	съ пересылкою во всѣ города россійской имперіи:
На годъ . 6 р. —	На годъ . . . 7 р.
,, полгода . 3 ,, 60 к.	,, полгода . . 4 ,,

За перемѣну адреса Редакція взимаетъ 25 к.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону, на углу Таганрокской и Московской улицъ, въ домѣ бывшемъ Сидоровыхъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ Редакцію газеты «Донская Пчела» въ Ростовѣ-на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногородних подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Редакторъ-Издатель И. А. Теръ Абраміанъ.

ЗАМѢНЕННОЕ СРЕДСТВО ТРЕСКОВАГО ЖИРА
SIROP DE RAIFORT IODÉ
DE GRIMAULT ET Cie

СМѢСЬ ТРЕСКОВАГО ЖИРА СЪ СОКОМЪ
ПОДЖЕЛУДОЧНОЙ ЖЕЛѢЗЫ
АПТЕКАРЯ ДЕФРЕНА ВЪ ПАРИЖѢ.
(HUILE DE FOIE DE MORUE PANCRÉATIQUE DU Dr DEFRESNE)

Эта смѣсь введенная въ желудокъ, весьма легко переваривается, она имѣетъ видъ бѣлаго масла, лишена совершенно непріятнаго вкуса трескового жира и даже имѣетъ пріятныи вкусъ сообщенный ему древеснымъ балсамомъ и лав ровишневой водой.

Она растворяетсявъ водѣ, модокѣ, шоколадѣ, кофѣ, буліонѣ, смотря по вкусу больнаго, она переносится самымъ слабымъ желудкомъ, дѣти её принимаютъ безъ малѣйшаго отвращенія.

Пріёмъ : 4 до 8 чайныхъ ложекъ ежедневно передъ обѣдомъ.

Депо : у главныхъ аптекарей и москотильщиковъ.

ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ДУХИ, ПРИГОТОВЛЕННЫЕ ИЗЪ YLANGYLANG
DE RIGAUD et Cie, PARFUMEURS, 8, rue Vivienne, PARIS
Ylangylang. — Roi des parfums.

Большая медаль за заслуги — На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

Изъ этого превосходнаго растенія мы составили слѣдующіе духи, которые кажутся своимъ достигли совершенства. Употребленіе ихъ убѣждаетъ каждаго въ томъ, что эти произведенія получены изъ настоящаго Ylangylang, занимающаго первое мѣсто между духами.

ПУДРА à l'Ylangylang.	ПОМАДА à l'Ylangylang.
КОСМЕТИКЪ à l'Ylangylang.	МАСЛО à l'Ylangylang.
COLD-CREAM à l'Ylangylang.	

Фабричная марка.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՎԼՕՖՍՕՆ

Բժշկում է ԱՏԱՄՆԵՐԻ և ծնոտի ցաւերը, պլոմբում է փտած ատամները ամենանոր միջոցով, որ հնարված է յայտնի Լանդոնի բժշկապետից և կատարում է ամեն տեսակ օպերացիաներ ատամների վերաբերութեամբ։ Գնում է չափաւոր գներով ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ատամներ նոր եղանակով ձգական կառուցվի վրա շինած, որ ընդունված է վերջին ժամանակները ամերիկական ատամնարոյժների ընկերութեան մէջ։ Պ. ՎԼՕՖՍՕՆ, որպէս Թիֆլիսի մշտական բնակիչ, երաշխաւոր է իր աշխատանքների լաւ հետևանքների համար։ Նրա բնակարանը գտնվում է ԲԱՐԻԱՏԻՆՍԿԻ փողոցում, իշխանուհի Թումանովի տանը, Ալէքսանդրեան այգու դիմաց։ Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 9 ժամին սկսած մինչև 2 կէսօրի, իսկ երկոյեան 3—6 ժամ։

11 (13)

ГЛИКОНИЗОВОЕ МЫЛО СИШЕЛЬ
8, RUE VIVIENNE, 8
PARIS

Большая медаль за заслуги — На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

Мыло, носящее названіе глицериновых, вообще несодержатъ въ себѣ ни малѣйшаго слѣда этого вещества, и единственно въ гликониновомъ мылѣ Сишель можно найти это основаніе.

Г. Сишель привлетированным способомъ достигъ соединенія гиперины съ ничнымъ желткомъ, изъ чего приготовленное мыло придаетъ кожѣ бѣлизну, бархатистую нѣжность и эластичность, всѣдствіе чего оно превосходитъ всѣ до сихъ поръ изобрѣтенныя мыла.

Это чрезычайно душистое мыло, вошло во всеобщее употребленіе въ элегантномъ свѣтѣ, и вслѣдствіе своихъ несравненныхъ гигіеническихъ свойствъ рекомендуемо всѣми парижскими врачами.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

Արդէն մի քանի տարիներ է որ Մարդկային դիմադրելիութիւնը ամենամեծ դերն է խաղում հիվանդութիւնների դեմ։ Ֆոսֆորական ալեխիները, որոնք գտնվում են ամենաբնական ձևով մարդու մարմնի մէջ, ամենաարագ ազդեցութիւն են գործում նրանց դեմ։ Ֆոսֆորական ալեխիները, որոնք գտնվում են ամենաբնական ձևով մարդու մարմնի մէջ, ամենաարագ ազդեցութիւն են գործում նրանց դեմ։ Մեր դարի մեծ գիտնականներ Լանդոնի Ֆոսֆորական ալեխիները, որոնք գտնվում են ամենաբնական ձևով մարդու մարմնի մէջ, ամենաարագ ազդեցութիւն են գործում նրանց դեմ։ Մեր դարի մեծ գիտնականներ Լանդոնի Ֆոսֆորական ալեխիները, որոնք գտնվում են ամենաբնական ձևով մարդու մարմնի մէջ, ամենաարագ ազդեցութիւն են գործում նրանց դեմ։ Մեր դարի մեծ գիտնականներ Լանդոնի

Գրքերի գրասենեակ Ս. Ֆրանկիլ

11. 12.

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ԲԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻՔՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտատամանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բալլինջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստան հանդիսում 1872 թուին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ գեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոշին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բոբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապերչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բալլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպո։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոչտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպո ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկայի մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒԲԻԼՋԵՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։

38 (50)

Дозволено цензурою 8 Января 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ